


ԼԷՎ ԿԱՍՍԻԼ



Մ Ա Ռ Ո Ւ Յ  
Յ Ր Տ Ա Շ Ո Ւ Ն Չ

# Ս Ա Ռ Ո Ւ Ց ՑՐՏԱՇՈՒՆՉ

Նկարները՝ Ա. ՇՉԵՐԲԱԲՈՎԻ  
Թարգմ. Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



8105 MAL 02

# ՓՈՔՐԱՅԱՍԱԿ ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Պատ. Խմբագիր՝ Եգ. Զովուրյան  
Տեխ. Խմբագիր՝ Սերոբ Դասադուրյան  
Սրբագրիչ՝ Հ. Մանուկյան




111-2449 gr

Դրամ 276, Պատվեր 1068, Հրատարակչ. 3453, Տիրաժ 5000

Հանձնված է արտագրության 15 սեպտեմբերի 1935 թ.  
Ստորագրված է տպագրելու 19 հոկտեմբերի 1935 թ.

Պետհրատի տպարան, Յերեվան II Գնունի 4



Իմ այս գիրքը նվիրում եմ այն յերեսային, վորը վոսանավորներ ե հորինել «Զեյլուսկինցինեք — սիրելիներ» վերնագրով: Նրա վոսանավորները յես զեհեղել եմ այս պատմվածքի մեջ:

Յերբ հայրիկը ճանապարհ եր ընկնում, Իգայի գլուխը հազիվ հազ եր հասնում քարտեզի վրա նկարված Սառուցյալ ովկիանոսին, իսկ Լյուդան, յեթե ձեռքն ել բարձրացնել, ելի չեր հասնի... Նրա գլուխը կհասներ միայն Սև ծովին, բայց Սև ծովը քարտեզի վրա չկար: Դա ցուրտ յերկրի ծովերի քարտեզն եր: Այդ քարտեզը ցած եր կախված, հենց դռան մոտ: Գնալուց առաջ հայրիկը կանգնեց քարտեզի առաջ: Հայրիկը Լյուդային գրկեց: Նա Լյուդային տարավ քարտեզի մոտ և մատով ցույց տվեց ծովերն ու ովկիանոսները:

—Այ, այստեղով պետք ե գնանք,—ասաց հայրիկը:

Յեվ նրա մատը Լենինգրադից անցավ Բալտիկ ծովով, ոտար յերկրներն մոտով, Գերմանական և Հյուսիսային ծովերով, Սառուցյալ ովկիանոսով և բեվեռային ծովերով, վորոնք գտնվում են յերկրագնդի ամենացուրտ կատարին, հյուսիսային յերկրների շուրջը, դեպի Մեծ կամ Խաղաղ ովկիանոսը:

—Ահա այս ճանապարհով պետք ե լողանք,—ասաց հայրիկը և համբուրեց Լյուդային:

Հետո նա ամուր գրկեց Իգային և ճամպրուկը վերցրեց: Լյուդան շուգեց հայրիկին թողնել: Քիթը կնճռտվեց և նրա շրթունքները դարձան ահա այսպես:

Նա ուզեց մի քիչ լաց լինել:

— Նայեցեք, յերեսաներ, իմ բացակայության ժամանակ կամակորուժյուն չանեք, մայրիկին չվշտացնեք: Յես այդ բոլորն իսկույն ռազիոյով կիմանամ: Իսկ յեթե քաջ լինեք, յես ձեզ համար ընծաներ կբերեմ:

Լյուդան ուզեց լաց լինել: Այժմ նրա շրթունքները դարձան, անյ, այսպես.

— Հայրիկ, — ասաց նա, — չե՞ վոր այնտեղ սառուցներ են ու սառուցներ... Հայրիկ, գիտե՞ս, ինձ համար Հյուսիսային բևեռից մի փոքրիկ կտոր բեր, անյ, այսքան սառցի կտոր:

— Մենք բեվեռի վրա չենք լինի... Մենք նրա մոտից կանցնենք: Բայց բեվեռային սառուց անպատճառ կբերեմ:

— Վորի վրա սպիտակ արջի վոտի հետք լինի, — ավելացրեց Իգան:

— Այլի հետք լինի, — ուղղեց Լյուդան:


Հայրիկը գնաց: Նա հուշակավոր ճանապարհորդ էր: Նա շրջել էր հյուսիսային բոլոր ծովերն ու յերկրները: Նա լողացել էր սառցահատներով, թռչել էր ցեպելիններով, շատ ձմեռներ ապրել էր սառած կղզիների վրա: Բայց նա այնտեղ յերբեք չէր ձանձրացել: Նա փող աշխարհի հետ բարեկամ էր, փորովհետև նա հուշակավոր ռազիո-հեռագրիչ էր և ռազիոյով բոլոր յերկրների հետ խոսում էր:

Այս անգամ հայրիկն արշավանքի գնաց «Չելյուսկին» մեծ շոգենավով: Շոգենավը ղեկավարում էր հյուսիսային լավագույն նավապետ Վորոնինը: Իսկ ամբողջ արշավախմբի պետն էր հյուսիսային ծովային մեծ ճանապարհի պետ, գիտնական պրոֆեսոր Շմիդտը: Իգան և Լյուդան պրոֆեսոր Շմիդտին շատ լավ էյին ճանաչում: Նա մեծ միրուք և համարձակ աչքեր ուներ:

Յեվ ահա «Չելյուսկին» շոգենավը լողում էր հեռու, հեռու, ծովից ծով: Յեվ լրագրերում, համարից համար, տպում էյին Իգայի և Լյուդայի հայրիկի հեռագրերը: Ամեն որ առավոտյան, դպրոց գնալիս, Իգան հարցնում էր մայրիկին. «Վորտե՞ղ ե հայրիկը.» — «Սպիտակ ծովում», — պատասխանում էր մայրիկը և լրագիրը բարձրաձայն կարդում: Յերբեմն ել հայրիկը ռազիոյով Իգային և Լյուդային բարեվ էր ուղարկում:

«Լողում ենք իրաշալի չեք պոփ, — հաղորդում էր նա հեռու շոգենավից, — տրամադրությունը հիանալի յե: Ինչպե՞ս ե սովորում Իգան: Այսոր սառցի վրայից ծովաշուն բռնեցինք: Յերեկ փոթորկի մեջ լնկանք: Լյուդան մանկապարտեզ գնում ե արդյոք: Իսկ անցյալ որը Կարայի ծովում մեր ճամբորդներից մեկն աղջիկ բերեց: Նրա անունը Կարինա դրին: Կարինան ձեզ բարևում ե: Նրան լողացնում են կոնքի մեջ, բայց հաճախ ջուրը թափվում ե, փորովհետև շոգենավը սաստիկ տատանվում ե: Մայրիկի առածները լսեցեք մի ձանձրացեք: «Չելյուսկին» նավից: Հայրիկ: «Վերջակետ:»

Շատ ժամանակ անցավ: Շոգենավն արդեն մոտենում էր Մեծ ովկիանոսին: Բայց ահագին ծանր սառուցներն ովկիանոսի ճանա-



պարհը կտրեցին: Քամին բշեց, բերավ սառցային սարեր, սառցի դաշտեր: Սառուցները դեմ ընկան շոգենավին և նրան կանգնեցրին: «Չելյուսկինն» սկսեց իր համար ճանապարհ բաց անել: Շոգենավի պտուտակն արագ աշխատում էր և խփում ջրին: Իր յերկաթի կրացով շոգենավը կտցահարում էր բարակ սառուցը: Նա իր ուժերի ներածին չափ ամեն տեղից դուրս էր պրծնում: Սակայն հաստ սառուցներն ամուր եյին բռնել նրան: Քամին սառուցներին այս ու այն կողմն էր քշում, իսկ սառուցներն իրենց հետ շոգենավին ել եյին տանում: Սառուցները շոգենավին ավելի ու ավելի եյին ճնշում: Բարձր սառցի սարերն ավելի ու ավելի եյին մոտենում: Սառուցները ճնշում էյին շոգենավին, բարձրանում էյին նրա վրա, մագլցում էյին, կուտակվում և, դիպչելով սառցին, կրճատում:

Մի անգամ առավոտյան մայրիկը լրագիրը վերցրեց, հանկարձ դեմքը լրջացավ, սպիտակեց, ինչպես հյուսիսային բևեռը:

— Հայրիկն ուր ե, — հարցրեց Իգան, վոր հենց նոր պատրաստվում էր դպրոց գնալու:

— Բեռնային ծովի մեջ գտնվող մի մեծ սառցի վրա, — ասաց մայրիկը: Յեվ Իգան լսեց թե ինչպես մի բան — տըկ, դիպավ լրագրին: Դա մայրիկի ծանր արտասուքն էր, վոր ընկավ թղթի վրա:

— Շոգենավը խորտակվել է, — ասաց մայրիկը, սառուցները ճնշել են շոգենավը, «Չելյուսկինը» խեղդվել է: — Իսկ հայրիկը, — հարցրեց Լյուդան, վորը հենց նոր գարթնելով, լսել էր սաբասփելի նորությունը:

— Մարդիկ բոլորն ել կարողացել են գուրս գալ սառցի վրա: Միայն մեկն է խեղդվել, իսկ մնացածները սառցի վրա յեն:

— Բա ի՞նչ կանեն նրանք այնտեղ:

Իգան ել նայեց քարտեզին, մայրիկն ել, Լյուդան ել: Բոլորն ել նայեցին քարտեզին... Այնտեղ կապույտ գույնով նկարված էր բեռնային սառը ծովը:

— Բա ի՞նչ կանեն նրանք այնտեղ:

Բայց ռադիո հեռագրիչը, հայրիկը, չէր վհատվում: Նա նստած էր փոքրիկ ճամբարային վրանում. կարծես թե վոչինչ չէր պատահել: Նա մատներով հուպ էր տալիս իր գործիքի բանային և ամբողջ աշխարհում տարածվում էր նրա տի - տի - տին, տր - տր - տին, տր - տր - տր: Յեվ ամբողջ աշխարհը լսում էր, թե ինչպես Իգայի և Լյուդայի հայրիկը ռադիոյով հաղորդում էր.

«Յերկրորդ որն է, ինչ չելյուսկինցիներն ապրում են սառցի վրա: Դիշերը յերկինքը մաքրվեց ամպերից և մենք աստղերի միջոցով վորոշեցինք մեռ տեղը քարտեզի վրա: Յերբ «Չելյուսկինը» սկսեց ընկղմվել, մենք կտրտեցինք պարանները: Պարաններով կապված էյին տակառները, տախտակները, բեռները: Այդ բոլորը ջրի յերեսը դուրս յեկան: Մենք ջրից հանեցինք գերաններ և հիսուն մարդու համար տուն ենք կառուցում, — յերկու փոքրիկ վառարանով: Խոհանոց ենք կառուցում: Մի տուն ևս կշինենք: Մինչև ավեր հեռու յե: Չորս կողմը սառցի սարեր են: Բայց բոլորն ել առողջ են ու քաջ: Բավականի ուժ ունենք»...

Յեվ շուտով ինքը հայրիկը ռադիոյով լսեց և պրոֆեսոր Շմիդտին ու իր մյուս ընկերներին հաղորդեց, վոր վողջ խորհրդային յերկիրը յելել է նրանց ոգնություն ցույց տալու: Ոգնության եյին գնում շոգենավեր և սառցահատեր: Թռչում էյին ինքնաթիռներ ու զիրիժաբլներ: Սլանում էյին շնասահնակներ և այրոսահնակներ:

Յեվ ԽՍՀՄ - ի բոլոր մարդիկ, և փոքրիկ Լյուդան, և ինքն ընկեր Ստալինն ազահությամբ լսում, կարգում էյին, սպասում, թե սառուցների վրայից ռադիո-հեռագրիչն ինչ կհաղորդի:

«Ամեն ինչ բարեհաջող է: Կվերազառնամ հուլիսին, — համոզված հաղորդում էր իր ընտանիքին ռադիո-հեռագրիչի հանդարտ, հեռու, բայց ուրախ ձայնը, — տր - տր - տի, տի - տր, տի - տի - տի... Կվերազառնամ հուլիսին»:

Բեռնային ծովի սառցի վրա հարյուր մարդ էր ապրում: Սառցի վրա մի պատիկ քաղաք բսավ: Այդ քաղաքը կոչվեց «Շմիդտի ճամբարը»: Սառցի սարերի, սառցի սպիտակ անապատի վրա մի մեծ կարմիր դրոշակ բարձրացավ: Հարևան սառուցները թըն-



դյունով հարձակվում էյին ճամբարի վրա: Սառուցը ճայթում էր ու ջարդվում: Դիշերը, յերբ չելյուսկինցիները քնած էյին, նրանց տունը յերկու մասի բաժանվեց: Ինքնագործ անկողինների մեջ հանկարծ սև անցք յերեկաց: Տան մի մասն իր մարդկանցով քաշվեց դեպի հյուսիս, իսկ մյուս մասը՝ դեպի հարավ: Բայց չելյուսկինցիներն իրենց չկորցրին և իրենց ունեցածը փոխադրեցին մի մեծ սառցի վրա:


Այժմ ամեն առավոտ Իգան էր չանթում լրագիրը: Առաջ նա, զպրոց գնալուց առաջ, վազում էր պատուհանի մոտ և նայում ջերմաչափին:

— Տասնվեց աստիճան սառնամանիք է, — գոչում էր նա: — Յես այսոր սահարան կգնամ: Սառուցը լավ է:

Իսկ այժմ նա նայում էր լրագրին և տխուր ասում.

— Քառասուն աստիճան սառնամանիք է... Սառուցն էլի ճաքել է...

Մայրիկը նիհարեց, նա գիշերը չէր քնում, միշտ անհանգիստ էր: Նա նայում էր քարտեզին և ախ քաշում: Իգան ել երտխուր: Մինչև անգամ Լյուդան ել սկսեց կամակորուժյուն անել: Միայն հայրիկը, ուրախ ռադիո հեռագրիչը, սառցի վրա չէր վհատվում: Նա ռադիոյով ուղարկում էր մեղմ ու զվարճալի հեռագրեր.



«Ինչպէս ե իգայի դպրոցական հառաջագիւթ յունը: Լյուդան ամեն որ մաքրում ե արդյոք ատամները: Յես այտեղ ամեն որ մաքրում եմ: Յերեկ մի սպիտակ արջ սպանեցինք: Նրանից բարե ձեզ»:

Մայրիկը պատասխանեց.

«Արջի միսը ձեզ հալալ լինի: Իգան պարգևատրված հարվածային ե: Սովորում ե «շատ լավ»:

«Պինդ համբուրում եմ թանգագին հարվածայինին, — յեկավ սառցի վրայից պատասխանը, — շնորհավորում եմ Լյուդայի ծննդյան տարեդարձը: Նրա համար նվեր գնիր: Իսկ հյուսիսային սառցի կտորը յես ինքս կբերեմ»:

Մի անգամ Լյուդան կամակորուժ յուն արավ և մայրիկի խոսքը չլսեց: Նա վոչ մի կերպ չէր ուզում տաք շալը գցի վրան: «Շալն ինձ ծակծկում ե և մարմինս քոր ե գալիս», — ասում եր նա: Մայրիկն ասաց. «Հայրիկին կգանգատվեմ»: Լյուդան չհավատաց. հայրիկը շատ եր հեռու: Սակայն մի քանի ժամից հետո, հայրիկից հեռու սառցի վրայից, հյուսիսային ծովից, հեռագիր յեկավ:



«Հյուսիսային ծով: Շմիդտի ճամբար: Ա՜յ, ա՜յ, ամոթ չե՛: Վերջ տացնում ես մայրիկին: Իսկույն շալը գցիր վրադ»...

Այսպես վողջ աշխարհն իմացավ, վոր Լյուդան, շալի պատճառով, կամակորուժ յուն եր անում: Լյուդան շալը գցեց վրան և նրան թվաց, թե այլևիս շալը նրան չի ծակծկում:

Հետո վրա հասավ առաջին ուրախալի որը: Յերիտասարդ ողաշու Լյապիգեվսկին ողանավով թռավ, յեկավ Շմիդտի փոքրիկ սառցի ճամբարը: Չեղյուսկինցիները վաղուց որ ու գիշեր աշխատում եյին: Նրանք սառցի վրա տեղ եյին մաքրում և հրապարակ — այեքողրոմ — պատրաստում: Նրանք անհամբերությամբ ինքնաթիռի եյին սպասում:

Հանկարծ յերկնում  
Մոտր ե քնդում,  
Շապեցե՛ք հրապարակ:  
Սավառնում ե,  
Իջնում արագ  
Սառցի վրա մի սավառնակ:

Ողաջուն իր ինքնաթիռի մեջ նստեցրեց լազերում գտնվող կանանց և յերկու յերեխաներին — Ալլուշկային և փոքրիկ Կարինան — Վերջինս ծնվել էր ծովում և դեռ գետնի վրա չէր յեղել։ Ասենք գետինը նրան շատ էլ հարկավոր չէր։ Միևնույն ե, նա դեռ ման գալ չգիտեր։ Սակայն խիզախ ողաջու Լյապիլդեմսկին ուրիշների հետ նրան էլ ցամաք բերավ, վոր Կարինոչկան խորհրդային ամուր յերկրի՝ վրա ման գալ սովորի։

Այդ որը յերեխաները բակում այսպիսի վոտանավոր հորինեցին և յերգեցին.

Ե՛յ, դո՛ւ, սառուց — ցրաւունց,  
Ովկիանոսը մի՛ գնա,  
Ովկիանոսը մի՛ գնա:  
Ինքնաթիռն այնտեղ էլ  
Կարող է թռչել, հասնել:

Յեվ հենց այդ որը բակում սկսվեց մի մեծ, նշանավոր խաղ — չեկուսկինցիների ազատումը։ Այդ խաղը հորինեցին Իգան և նրա ընկեր Աբլոր Պետիկը։ Նա իսկական ողաջվի տղա յեր։ Նա բակի գլխավոր տղան էր։

Սառցի ու ձյունի մի մեծ կույտի վրա, բակի մեջ, տաշեղներից և փայտիկներից նրանք կառուցեցին Շմիդտի ճամբարը։

Առաջ ազատեցին բոլորից թուլերին։ Չեկուսկինցիները միշտ այդպես էին անում։

— Կանանց և յերեխաներին միշտ ամենից առաջ են ազատում, — հաստ, նավապետի ձայնով ասաց Իգան։ Նա միաժամանակ և՛ ուղիորհնազորիչ էր և՛ պրոֆեսոր Շմիդտ։ — Յերեխաներ և՛ մայրեր, կարող եք ազատվել, — կոկնեց նաև Լյուդան, իր տիկնիկի ու յերկու ընկերուհիների հետ, հերթի կանգնեցին Աբլորի յետեվին, վորն ողաջուն էր։ Նա սղղում էր մի սահուկով։ Աբլորը շրթունքները դուրս ցցեց, դաժանաբար հոնքերը կիտեց, փնչացրեց և ձեռքերը թափահարեց։

— Յես ձեզ իսկույն կթուցնեմ չոր տեղ — Վանկարեմ, — ասաց Աբլորը։

Չոր տեղը գտնվում էր արտաքին սանդուխքի վրա, վորտեղ, մի քանի բոպեյից հետո, իջավ Աբլորն իր ճամբորդների հետ։

Սակայն բարկացկոտ դռնապան Խարիտոնը լեկավ, ցախավելը թափահարեց և մրրկի նման վորոտաց։

— Յես, ձեզ, — գոչեց նա։ Իսկույն ձյունակույտից ցած իջեք։ Այս ինչ տեսակ խաղալիքներ են։ Չյունն եք միայն այս ու այն կողմ տանում։

Խարիտոնի միջուկը յերկար էր, բայց պրոֆեսոր Շմիդտին բոլորովին նման չէր... Յերեխաները վիրավորված իջան ձյունակույտից։ Բայց այդ ժամանակ աշխատանքից վերադարձավ հարևան Ֆյոդոր Յեգորիչը։ Ֆյոդոր Յեգորիչին յերեխաները շատ էին սիրում։ Նրան բեվեռային գործերի մեծ վարպետ էին համարում, վորովհետև ամռանը սիրում էր սովերի հովը, ցուրտ կվաս էր խմում և յերեխաներին պաղպղակով հյուրասիրում։ Ֆյոդոր Յեգորիչը յե-



րեխաներին պաշտպանեց։

— Ինչո՞ւ յես սրանց խաղը փչացնում։ Չյունն ես ափսոսում։

— Անկարգություն է, — գոչեց Խարիտոնը։

Ֆյոդոր Յեգորիչը մոտեցավ յերեխաներին և հանդարտ ձայնով ասաց.

— Վոչինչ, յերեխաներ, Խարիտոնը փոթորկի նման է. արագ վրա կհասնի, կաղմկի, իսկ հետո կպառկի... քնելու Իսկ յես, յերեխաներ, կղեկավարեմ յեղանակը։ Ձեզ կհաղորդեմ, թե յերբ կարելի յե խաղալ և յերբ վոչ։ Իմ պատուհանից յերեվում ե, թե յերբ ե նա գալիս։

Յեվ այդ որից այսպես էին անում. Ֆյոդոր Յեգորիչը դուրս էր գալիս արտասանդուխքի վրա կանգնում և ասում.

— Տեսանելիությունը վատ է, բուք է գալիս և ամեն ինչ ավլում, թռչել չի կարելի։

Յեվ յերեխաներն արդեն իմանում էին, վոր բարկացկոտ Խարիտոնը գալիս է, պետք է ծլկվել։

Բայց հաճախ Ֆյոդոր Յեզորիչն աչքով անի լով ասում եր.

— Հորիզոնը մաքուր ե. կարելի չե թռչեր:

Յեվ այն ժամանակ յերեխաները խաղում էին: Դռնապան Խա-  
րիտոնը հայհոյեց և մի գեղեցիկ որ վողջ ձյունը բակի մեջտեղից  
դուրս տարավ:

Բայց սարը մնաց

Բակում կանգնած:

Յերեխաները հավաքվեցին.

Բարձր «ուռա» գոչեցին

Խաղն սկսվեց կրկին

Ցախասան կողքին:

Ամեն ուր յեվ իրիկուն

Խաղեւ էին սառում,

Բայց այսու առավոտից

Ձեռք փառեցին խաղից.

Սառուցը ծեռացավ,

Հալվելու ժամանակը յեկավ:

Սարը ճեղքվեց,

Ծայրը ճախեց:

Ջրափոսերն այս ու այն կողմն էին հոսում: Յեվ ելի յերեխա-  
ները խաղալու տեղ չունեին, բայց Ֆյոդոր Յեզորիչը մխիթարում  
երանց:

— Վոչինչ, — ասաց նա, — քանի վոր յես վարում եմ ձեր յե-  
ղանակը, անհանգստանալ պետք չի: Յես կախարդ չեմ, բայց կտես-  
նեք, վոր վաղն ելի Ջրափոսերը կսառչեն:

Յեվ իսկապես, առավոտյան բոլոր Ջրափոսերը սառեցին, և հե-  
տեյալ առավոտ և մյուս որը սառուցն այլևս համարյա թե չերհալ-  
վում:

Արդեն տաք եր, ձյունն ամեն տեղ վաղուց եր հալվել: Գարունը  
տաքացրեց մայիսը, ասֆալտը չորացավ:


Այժմ Աքլորը չելյուսկինցիներին ազատում եր յերկանիվանի  
հեծանիվով — տախտակով: Նա մի վոտով կանգնում եր տախտա-  
կի վրա և դեկը բռնում: Մյուս վոտով հրում եր և բակում այս ու  
այն կողմը գնում:

Ցախասան յետևի մեծ Ջրափոսն ելի ամեն առավոտ սառչում եր  
իսկ սառցի սարը շատ դանդաղ եր հալվում... Վոչ վոք չեր հասկա-  
նում, թե ինչու:

Խաղիտոնը մինչև անգամ միլիցիոներ կանչեց: Մելիցիոները յե-  
կավ ու ասաց, վոր այստեղ վոչ մի դեպք չկա, սառուցը կանոնավոր  
ե, բայց լավ կլինի, վոր դուրս տանեն...

Խաղիտոնը յերկաթե նիզով մանրացնում եր սառուցը: Իսկ  
առավոտյան բոլոր սառուցներն ելի սառչում, իրար էին կպչում  
ու ելի սար դառնում: Խաղիտոնը գլուխը կորցրեց, իսկ հետո ձեռքը  
թափ տվավ. «Վոչինչ չի կարելի անել» և հավիտենական սառցի  
մեջ մի շիջ կվապ գրեց, վոր սառչի:

Իսկ յերեխաներն ամեն ուր չելյուսկինցիներ էին խաղում, մայ-



րին ել ամեն ուր վախեցած աչքերով խրվում եր լրագրի մեջ. Իզան  
ու Լյուդան հայրիկին կարոտել էին: Բայց չելյուսկինցիներին ազա-  
տելը շատ դժվար եր: Թափառող սառուցները շարժում էին ճամ-  
բարը: Սառնամանիքները և բուքը կոկում էին ինքնաթիռների հետ  
Մոտորները, մարդկանց պես, սարսափելի սառնամանիքում շնչա-  
պառ էին լինում: Մարդիկ փայտանում էին: Բայց դրանք խոր-  
հըրդային մարդիկ էին, համառ, բաջ մարդիկ: Նրանք վորոշեցին  
ինչպես վոր լինի ազատել չելյուսկինցիներին: Ողաչուններն ողն  
էին նետվում քամու և սառնամանիքի դեմ: Վողջ աշխարհը նայում  
եր դեպի հյուսիս: Սառուցները կուտակվում էին ճամբարի վրա:  
Սառուցները կործանում էին տները: Պրոֆեսոր Շմիդտը ծանր հի-  
վանդացավ: Նա իր հիվանդու-թյան մասին վոչ վոքի չեր ասում:  
Նա անձնատուր լինել չեր ուզում: Բայց ռադիո հեռագրիչն այդ  
մասին ամբողջ աշխարհին հայտնեց:

Յեվ ահա, վերջապես, խորհրդային ողաչունները ճեղքեցին սառ-  
նամանիքն ու բուքը և ուրախ ռադիո-հեռագրիչն աշխարհով մեկ  
հանաք արավ, վոր Շմիդտի ճամբարի և Վանկարեմի միջև կանոնա-  
վոր ողաչին մարդատար հաղորդակցություն ե սկսվել: Քաջ ողա-  
չունները թողնում էին ամուր յերկիրը և իջնում խափառող սառցի

վրա: Սառուցն ամեն րոպե պատրաստ եր ջարդվելու, ճաքելու: Ինք-  
նաթիռի դահուկներն տակից սառուցը փախչում եր: Սառցակույ-  
տերի վրայով պետք է ծանր գործիքը քաշելին: Յե՛վ ողաչունները  
քաշում եյին ու կրկին ողբ բարձրանում, չելյուսկինցիններին  
ամուր, չոր յերկիր փոխադրելով:

Ուրախ ուղիով - հեռագրիչը հազիվ երկարողանում ուղիով հա-  
ղորդել. «Ազատված են քսան յերկու մարդ»... Հետո յերեսուն վեց:  
Հետո հիսուն յոթ: Հիվանդ պրոֆեսոր Շմիդտին համարյա թե ուժով  
փոխադրեցին. նա ուզում եր ամենից վերջը թռչել. Բայց վերջը  
սառցի վրա վեց հոգի մնացին: Յե՛վ, իհարկե, ուրախ ուղիով հեռա-  
գրիչն ել մինչև վերջ մնաց:

Ուշ եր և մութ: Ողաչունները խոստացան հետևյալ առավոտ  
թռչել, գալ և նրանց ել տանել: Ողաչունները թռան, գնացին: Ամա-  
յացած ճամբարում մնացին վեց մարդ և ութ շուն: Գիշերը վրա  
հասավ և բեռնային ծովի վրա ծագեց բեռնային աստղը: Նա Մոս-  
կվայի վրա յեւ ծագեց և Մոսկվայի մարդիկ բեմեռային աստղին  
նայելով, մտածում եյին սառցի վրա նստած վեց քաջերի մասին:

Իգան յերկար ժամանակ քնել չեր կարողանում. նա մտածում  
եր թե ինչ սարսափելի յե գիշերը սառցի վրա... Սառցի տակ սառ-  
չում է ծովի սև խորությունը, իսկ շուրջը թափառում են չարա-  
միտ, սուր սառուցներ:

Իգան աչքերը բաց պռկել եր: Նրան սկսեց թվալ, վոր սեն-  
յակում ել են սառուցներ շարժվում: Բայց շարժվում եր առաս-  
տաղի վրայով անցնող ավտոմոբիլի լույսը:

Մյուս որն առավոտից մայրիկն ուր վոր գնաց հայրիկի մա-  
սին տեղեկություն իմանալու: Իգան դպրոցից վերադարձավ և Լյու-  
դայի հետ գնաց բակը սառցաբլրի վրա խաղալու: Յեկավ Աքլոր Պե-  
տիկը, յեկան մյուս յերեսանները: Բայց խաղալ չկարողացան:  
Փորձեցին սպիտակ արջեր վորսալ, բայց Աքլորի մայրը դուրս յեկավ  
ու ասաց, թե չի թողնի, վոր թավշե արջը գնեն կեղտոտ սառցի վրա:  
Շտուրմա անունով շունը բռնեցին և ուզում եյին լծել սահնակին,  
բայց Շտուրման վիրավորվեց:

— Յես բեվեռ - ու - ու - ալին չեմ, յես տնային - ն - ն եմ,  
— մըթմըթաց նա և Աքլորի մատը կծեց: Բայց հանկարծ մայրիկի  
պատուհանը բացվեց: Մայրիկը գլուխը դուրս հանեց և ուրախ ու  
զիլ ձայնով գոչեց:

— Յերեսաններ, կարող եք խաղը վերջացնել: Սառուցը դատարկե,  
յերեսաններ: Վերջին մարդիկ թռել են այնտեղից: Յե՛վ ամենից վեր-  
ջինը գիտե՞ք ովքեր են յեղել: Նավապետ Վորոնինը և մեր հայրի-  
կը — ուրախ ուղիով հեռագրիչը: Ահա թե ինչ պիսի մարդիկ են ապ-  
րում մեր աշխարհում: Ահա թե ինչպիսի մարդ պետք է լինել, յե-  
րեսաններ: Լսեցե՛ք հայրիկի վերջին հեռագիրը:

«Ի՞նչորից հետո հեռանում ենք սառցից: Շմիդտի ճամբարն  
այլևս գոյություն չունի: Վերջին խարույկը հանգավ դատարկ սառցի  
վրա, աշտարակի գլխին մնաց միայն կարմիր դրոշակը:»

— Մայրիկ, իսկ շներ մնացել են այնտեղ:

— Վա՛յ, նրանց ել են տարել:

— Ի՞նչ, ուռն:

Այստեղ Աքլոր Պետիկը յերգեց:

Ձելյուսկինցինք,

Իմ սիրելիներ,

Շաս - շաս եյի

Յես վախենում

Գարունից,

Շաս - շաս եյի

Յես վախենում

Գարունից,

Իգուր եյի

Յես վախենում

Գարունից —

Ձկա սառուց, բուֆ —

Ազատված եմ դու:

Իսկ առավոտյան բակի սառուցը հալվեց և ջրափոսերը չսառան:

Հուլիսին, ինչպես խոստացել եր, ուրախ ուղիով հեռագրիչը վե-  
րադարձավ Մոսկվա: Նա վերադարձավ չելյուսկինցինների և ողաչու-  
ների — խորհրդային միության հերոսների հետ: Վողջ Մոսկվան  
դիմավորեց հերոսներին: Խաղիո հեռագրիչը պուլիկի մեջ բեռնային  
սառուց եր բերել: Դա մի կտոր սառուց եր, վորի վրա չելյուսկին-  
ցինները յերկու և կես ամիս նստել եյին: Սառցի կտորի վրա յե-  
րևում եր մի մեծ ճանկ — սպանված սպիտակ արջի թաթի հետք:  
Այդ սառուցը նա բերել եր ինքնաթիռով, շների սահնակով, շոգե-  
նավով, գնացքով: Ամեն տեղ նա պուլիկը սառցի մեջ եր դրել, վոր  
ընծան չհալվի: Յե՛վ նա պուլիկն անվնաս հասցրեց Մոսկվա հատուկ  
վագոնով — սառցարանով:

Հայրիկը յերկաթուղու կայարանից ուրախ և բախտավոր յե-  
կավ տուն: Իգան և Լյուդան ծվծվում և թռչկոտում եյին նրա շուրջը:  
Յերկուսն ել շատ եյին ուզում իմանալ. բերե՞լ է արդյոք հայրիկը  
խոստացած սառցի կտորը: Նրանք քաղաքավարությունից դրդված  
չեյին հարցնում, բայց անհամբեր, անհամբեր, սպասում եյին:

— Կացե՛ք, ընկերներ, — ասաց նա, — պուլիկն հըր ե:

Պուլիկը հատակի վրա յեր, ճամբրուկի կողքին: Խաղիո-հեռագրի-  
չը պուլիկը մոռացել եր: Հուլիսի ջերմ արեգակը տաքացրել եր պու-  
լիկը և նրա հատակին, կեղտոտ ջրի մեջ, լողում եր մի մեծ սև ճանկ:

— Ահա քեզ հյուսիսային բեմեռի մի կտոր: Հալվել ե... — փրնթ-  
փրնթաց հայրիկը: Ինչպե՞ս է յեղել, վոր յես...

— Վոչինչ, — քաղաքավարի ասաց Իգան. — այնուամենայնիվ  
ճանկը չի հալվել:

Լյուդան փքվեց և քիչ մնաց, վոր լաց լինի:

— Մի րոպե, — լսվեց հարևան Ֆյոդոր Յեգորիչի ձայնը: — Տվե՛ք  
պուլիկը... Յես իսկույն...

Նա վերցրեց պուլիկը և իր սենյակը վագոն: Ֆյոդոր Յեգորիչն  
իսկույն վերադարձավ և սեղանի վրա դրեց քրտնած պուլիկը: Իո-

լորն ան արին: Պուլիկի մեջ կար բեռնային սառուց, վորի վրա  
յերեվում եր արջի ճանկ:


— Լսեցեք, — ասաց ռազիոնեռագրիչը, — աշխարհում հրաշքներ  
չեն լինում, այդ ի՞նչ արիք:

— Հասարակ բան, — պատասխանեց Ֆյոդոր Յեզդրիչը: — Յես  
ցուրտ գործերի վարպետ եմ: Յես աշխատում եմ սառցարանում:  
Մյնտեղ պատրաստում են արհեստական չոր սառուց: Այդպիսի սա-  
ռուցը կարելի չե գրպանում պահել: Նա հալվում ե, բայց չի հոսում,  
այլ ուղղակի ող ե դառնում: Յեթե մի կտոր սառուց գցենք ջրի  
մեջ, ջուրն իսկույն կսառչի: Չե՞ վոր բակի ջրափոսերը յես եյի  
սառցնում:

Այստեղ բոլորը ծափ տվին.

Հետո հայրիկը հանկարծ նայեց Իգային:

— Դե, Իգա, մի քարտեզի մոտ կանգնիր, տեսնեմ, — ասաց նա:  
Իգայի գլուխն այժմ հասնում եր հյուսիսային բեռին:





16 MAR 1936

191

111

2449

ЛЕВ КАСИЛЬ  
ЛЪДИНА ХОЛОДИНА

40 ч.

АРМЕНГИЗ - 1936